ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 դեկտեմբեր 2017, № 22. 6

ՇՊՀ-Ի ՔՈԼԵՋԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Շիրակի պետական համալսարանի կանոնադրության 48-րդ կետի 4-րդ ենթակետով, «ՇՊՀ» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգի 2-րդ կետի 2.2.4 ենթակետով՝ ՝ ՇՊՀ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Քոլեջի կանոնադրությունը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

Հաստատված է՝
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2017թ. դեկտեմբերի 28-ի նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Ս.Գ. Մինասյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«ՇԻՐԱԿԻ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔՈԼԵՋԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. « Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետև՝ Համալսարան) քոլեջը (միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը) (այսուհետև՝ Քոլեջ) համալսարանի կազմում առանձին ստորաբաժանում է, որն իրականացնում է ավանդական և այլընտրանքային մանկավարժական մեթոդների զուգորդմամբ միջին մասնագիտական մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում ուսանողների /ուկնդիրների/ ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

2. Քոլեջի հիմնադիրը «Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամն է:

3. «Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ-ի քոլեջը Գյումրու պետական մանկավարժական քոլեջի ՊՈԱԿ-ի իրավահաջորդն է:

4. Քոլեջը ստեղծվում, գործում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Համալսարանի կանոնադրությանը և իր կանոնադրությանը համապատասխան:

5. Քոլեջի կանոնադրությունը Համալսարանի կանոնադրության հիման վրա հաստատում է Համալսարանի գիտխորհուրդը:

6. Քոլեջը չունի իր անվամբ կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր:

7. Քոլեջը իրավունք ունի Համալսարանի համաձայնությամբ իրականացնելու համագործակցություն միջին մասնագիտական և համապատասխան լրացուցիչ կրթության, մանկավարժական գործունեության և կրթության այլ բնագավառներում:

8. Քոլեջում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն: Կրոնական գործունեությունը և քարոզչությունն արգելվում են՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

9.Քոլեջի լրիվ անվանումն է՝

«Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջ (միջին մասնագիտական ուսումնական հաստատություն)

10. Քոլեջի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Գյումրի, Շիրակացի 5
mankavarjakanqoleg@mail.ru

II. ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քոլեջի հիմնական խնդիրներն են՝

ա. հասարակական կյանքի տարբեր ոլորտների համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ կրտսեր մասնագետների պատրաստումը, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորումը:

բ. անհատի մասնագիտական կրթության, նրա հոգևոր ու ֆիզիկական զարգացման պահանջմունքների բավարարումը:

Քոլեջի գործունեության հիմնական նպատակներն են՝

1. Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Քոլեջը ընդունելությունը կատարում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից տվյալ ուսումնական տարվա համար նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հաստատված ընդունելության կանոններին և լիցենզիայով սահմանված տեղերին համապատասխան:

3. Քոլեջի կրթական գործունեությունը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, միջին մասնագիտական պետական կրթական չափորոշիչներով:

4. կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ դառնալ Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացման առավել մեծ ներուժ ունեցող լիարժեք կառույց՝ գերազանցության և տարածաշրջանային ռեսուրսների կենտրոն՝ ստանձնելով բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դեր:

5. իր մարզի, համայնքի ու երկրի զարգացման պահանջների բավարարմանը և մասնագիտական կրթության համակարգի զարգացմանն ուղղված մասնագիտական, կառավարչական, ուսումնամեթոդական, գիտամանկավարժական, մշակութային, նյութատեխնիկական ներուժի ձևավորմանը նպաստելը, ինչպես նաև հարակից ուսումնական հաստատությունների զարգացմանն օժանդակելը ,

6. մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջավոր միջազգային փորձի ներդրումը, զարգացումն ու տարածումը, կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդրումը և տեղայնացումը , կրթության գլոբալ համակարգերին ինտեգրումը ,

7. աշխատանքային շուկայում պահանջարկ ունեցող որակյալ մասնագետների պատրաստումը / վերապատրաստումը, վերառրակավորումը /,

8. ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու ակտիվ քաղաքացու համակողմանի ձևավորումը ,

9. մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ներդրումը :

10. Քոլեջում դասավանդումը և դաստիարակությունն իրականացվում են «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

11. Քոլեջի ուսումնական գործընթացը կազմակերպվում է երկու կիսամյակից բաղկացած ուսումնական տարով: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ուսանողներն ատեստավորվում են: Ատեստավորման ձևը որոշում է մ/մ կրթության բաժինը:

12. Քոլեջի ուսումնական գործունեությունը կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով:

13. Քոլեջում ուսուցումը կարող է կազմակերպվել առկա, հեռակա, հեռահար և դրսեկության ձևերով:

14. Քոլեջը կրթական ծրագրերի արդյունավետ յուրացման նպատակով ուսուցման առաջավոր ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությամբ ուսանողների համար ստեղծում է անհրաժեշտ պայմաններ:

Քոլեջի ուսանողների և ունկնդիրների ուսումնական, արտադրական պրակտիկան, որպես կանոն, անցկացվում է կազմակերպություններում և հիմնարկներում՝ վերջիններիս և Համալսարանի միջև կնքված պայմանագրերի հիման վրա: Ուսումնական, պրակտիկան ավարտվում է հաշվետվությամբ և գնահատմամբ :

15. Քոլեջում ուսումնական պարապմունքներն անցկացվում են խմբերով, հոսքերով և անհատական: Դրանք իրականացվում են հետևյալ հիմնական ձևերով՝ դասախոսություն, սեմինար, գործնական, լաբորատոր , ստուգողական , անհատական, ինքնուրույն աշխատանքներ, խորհրդատվություն, պրակտիկա, կուրսային աշխատանք (կուրսային

նախագծում), դիպլոմային աշխատանք (դիպլոմային նախագծում): Քոլեջը կարող է կիրառել նաև ուսումնական պարապմունքների այլ ձևեր:

Քոլեջում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 01-ից:

Լսարանային պարապմունքների բոլոր ձևերի համար սահմանվում է ակադեմիական ժամ՝ 40 րոպե տևողությամբ, զույգ ժամերի միանվագ վարման դեպքում՝ 80 րոպե:

16. Առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների համար տարեկան առնվազն երկու անգամ սահմանվում են արձակուրդներ՝ 8-12 շաբաթ ընդհանուր տևողությամբ, այդ թվում՝ ամառվա շրջանում՝ 6-10 շաբաթ:

17. Ուսանողների միջին շաբաթական բեռնվածությունն ուսումնական պարապմունքներով, որպես կանոն, պետք է լինի 36 ուսումնական ժամ: Ուսումնական պարապմունքների տարբեր ձևերի և արտադրական ուսուցման ժամկետները սահմանվում են ուսումնական պլաններով:

Առաջադիմության միջանկյալ ատեստավորման ու ընթացիկ վերահսկողության ձևերը, կարգը և պարբերականությունը սահմանվում և հաստատվում են ուսումնական պլանների հիման վրա:

18. Լաբորատոր աշխատանքներին, գործնական ու սեմինար պարապմունքներին, ֆիզիկական դաստիարակության պարապմունքներին, առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքներին, ինչպես նաև կուրսային նախագծման և պրակտիկայի ժամանակ ուսումնական խումբը կարող է բաժանվել ենթախմբերի:

Ելնելով մասնագիտության յուրահատկությունից՝ համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքներ կարող են անցկացվել նաև առանձին ուսանողների հետ (անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական-ստեղծագործական ձևեր և այլն):

19. Քոլեջի շրջանավարտին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվում է միջին մասնագիտական կրթության մասին պետական նմուշի համապատասխան փաստաթուղթ:

Տվյալ կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է համապատասխան տեղեկանք:

20. Քոլեջի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները փոխադրվում են ԲՈՒՀ-ի համապատասխան մասնագիտությամբ երկրորդ կուրս հեռակա ուսուցմամբ :

21. Քոլեջը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանած կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա. միջին մասնագիտական, նախնական մասնագիտական կրթության, հանրակրթության , լրացուցիչ կրթության կազմակերպում,

բ. արտադպրոցական դաստիարակության կազմակերպում ,

գ. նախապատրաստական դասընթացների կազմակերպում

դ. մասնագետների վերապատրաստում ու որակավորման բարձրացում,

ե. ուսումնամեթոդական նյութերի, ձեռնարկների մշակում ,

զ. քոլեջի ուսանողների և աշխատողների սննդի կազմակերպում :

22. Քոլեջն իր գործունեությունն իրականացնում է Համալսարանի, գիտահետազոտական, արտադրական ու ոչ արտադրական կազմակերպությունների հետ սերտ

համագործակցությամբ, կարող է մասնակցել Համալսարանի գիտաժողովներին, գիտագործնական սեմինարներին, օլիմպիադաներին և այլն:

23. Քոլեջը միջոցներ է ձեռնարկում ուսանողների ինքնազարգացման, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման համար:

III. ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1. Քոլեջի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և իր կանոնադրությանը համապատասխան:

2. Հիմնադիրն ունի քոլեջի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի: Հիմնադիրն օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակում՝

ա. սահմանում է քոլեջի գործունեության առարկան և նպատակները, նրա կողմից իրականացվող գործունեության տեսակները,

բ.վերակազմակերպում կամ լուծարում է քոլեջը,

գ.իրականացնում է այլ լիազորություններ:

3. Քոլեջի անմիջական կառավարումն իրականացնում է քոլեջի վարիչը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Համալսարանի ռեկտորի կողմից:

4. Քոլեջը իր կազմում կարող է ունենալ ենթաստորաբաժանումներ, լաբորատորիաներ, կաբինետներ, արհեստանոցներ:

5. Քոլեջի վարիչը՝

ա. կազմակերպում և ղեկավարում է քոլեջի գործունեությունը,

բ.հաստատում է քոլեջի ռազմավարական ծրագրերը, ներկայացնում է քոլեջի շահերը և գործում է նրա անունից ,

գ. իրականացնում է վերահսկողություն քոլեջին հատկացված գույքի ու միջոցների, նպատակային օգտագործման համար,

դ. Համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ քոլեջի գործունեության ապահովման և քոլեջում համապատասխան հանձնաժողովներ ձևավորելու վերաբերյալ,

ե. իրականացնում է վերահսկողություն քոլեջում ուսուցման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի նկատմամբ, սահմանում է ուսումնառության արդյունքների ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը

ըստ ուսումնական պլանի,

զ. իրականացնում է վերահսկողություն ուսանողների առաջադիմության, վարքի, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման նկատմամբ,

է. ապահովում է քոլեջի աշխատակիցների կողմից Համալսարանի ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը և ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցների մասին,

ը. իր իրավասության սահմաններում տալիս է կարգադրություններ ու հանձնարարություններ, որոնց կատարումը պարտադիր է քոլեջի աշխատողների և սովորողների համար,

թ. սահմանված կարգով տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում Համալսարանի գիտխորհրդին,

ժ. մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է քոլեջի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը,

ի. վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, ուսանողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի,արտալսարանային աշխատանքների կազմակերպման, աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

լ. ապահովում է ներքին կարգապահական կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

խ. ուսումնական պլանին համապատասխան ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար,

ծ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է պատասխանատվություն քոլեջում ուսանողների կյանքի և առողջության պահպանման, ինչպես նաև ուսանողների ու աշխատողների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար,

կ. համակարգում և հսկում է աշխատողների աշխատանքը,

հ. ապահովում է նախարարության հանձնարարականների կատարումը,

ձ. ապահովում է կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը,

ղ. սահմանված կարգով ձևավորում է ուսանողների համակազմը, ապահովում նրանց սոցիալական պաշտպանվածությունը,

ճ. ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների

կրթություն ստանալու իրավունքը,

մ. օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն օրենքների, նախարարության, Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարանի խորհրդի որոշումների, այլ իրավական ակտերի և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

յ. իրականացնում է քոլեջի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

6. Քոլեջի տնօրենի բացակայության ժամանակ, Համալսարանի ռեկտորի հրամանով նրա պարտականությունները կարող է կատարել քոլեջի այլ աշխատակից :

7. Քոլեջում վարիչը չի կարող միաժամանակ զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

8. Ուսանողների կրթության և դաստիարակության որակի կատարելագործման, մեթոդական աշխատանքների, դասախոսների մանկավարժական վարպետության բարձրացման, առաջավոր փորձը կիրառելու նպատակով քոլեջում կարող են ստեղծվել առարկայական (ցիկլային) հանձնաժողովներ, մանկավարժական, ուսումնամեթոդական, գիտամեթոդական, ուսանողական և այլ խորհուրդներ, որոնց հիմնական խնդիրները, գործառույթներն ու աշխատակարգը որոշվում են քոլեջի կանոնադրությամբ:

9. Քոլեջում գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարանում գործող կարգի համաձայն:

IV. ՔՈԼԵՋԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

1. Քոլեջի գործավարը՝

ա. ծրագրում, համակարգում է իր ընթացիկ գործունեությունը,

բ. կատարում է քոլեջի տնօրենի հանձնարարականները,

գ. պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները, իր առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու համար,

դ. պատասխանատվություն է կրում իր գործունեության ընթացքում կատարած իրավախախտումների և /կամ/ պատճառած նյութական վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության վարչական, աշխատանքային, քրեական և քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով,

ե. ընդունված կարգի համաձայն փոխանցում է գրությունները և փաստաթղթերը կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին կամ կոնկրետ կատարողներին՝ աշխատանքում առաջնորդվելու կամ պատասխաններ նախապատրաստելու համար,

զ. կազմակերպում է ղեկավարի հեռախոսային խոսակցությունները, նրա բացակայության ժամանակ գրանցում է ընդունող-խոսակցային սարքերի (ֆաքս, տելեքս և այլն) միջոցով ստացվող տեղեկատվությունը և ժամանակին տեղեկացնում ղեկավարին՝ դրանց բովանդակության մասին,

է. կատարում է նախապատրաստական աշխատանքներ ղեկավարի կողմից անցկացվող նիստերի և խորհրդակցությունների համար (հավաքում է անհրաժեշտ նյութեր, մասնակիցներին տեղեկացնում անցկացվող նիստերի և խորհրդակցությունների ժամանակի, անցկացման վայրի և օրակարգի մասին, վարում և ձևակերպում է անցկացվող նիստերի և խորհրդակցությունների արձանագրությունները),

ը. կազմակերպում է հաճախորդների ընդունելությունը, աջակցում է աշխատակիցների խնդրանքների և առաջարկների ուսումնասիրման օպերատվությունը,

քոլեջի գործավարն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ և պատասխանատվություններ

2. Քոլեջում մանկավարժական աշխատանք կարող է կատարել Համալսարանի աշխատակիցը, արտադրական վարպետները, բացառիկ դեպքերում՝ ոչ մանկավարժական բարձրագույն կրթություն ունեցող անձը, որի քոլեջում աշխատելու կարգը և պայմանները սահմանում է Համալսարանը:

3. Քոլեջի դասախոսներն իրավունք ունեն՝

ա. կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու քոլեջի կառավարմանը,

բ. միասնական պետական կրթական չափորոշիչի շրջանակներում ընտրելու և օգտագործելու կրթական գործընթացի ապահովման համար անհրաժեշտ ուսուցման ու դաստիարակության մեթոդիկաներ, ուսումնական ձեռնարկներ և նյութեր, գիտելիքների գնահատման մեթոդներ,

գ. սահմանված կարգով օգտվելու Համալսարանի տեղեկատվական ֆոնդերից, ուսումնական, գիտական, սոցիալ-կենցաղային, բուժական և այլ ծառայություններից, տեխնիկական հնարավորություններից,

դ. կատարել այլ աշխատանքներ ու պարտականություններ, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներից,

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու Համալսարանի ռեկտորի հրամանները,

զ.աշխատողն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4. Քոլեջի դասախոսը պարտավոր է՝

ա. կատարել Համալսարանի և քոլեջի կանոնադրությունների պահանջները և պահպանել Համալսարանի ներքին կարգապահական կանոնները,

բ. հետևել բարոյականության նորմերին, ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից և արտահայտություններից, որոնք կարող են հանգեցնել թե քոլեջի, թե ՇՊՀ–ի հաստատության անձնակազմի բարոյահոգեբանական մթնոլորտի վատացմանը,

գ. բարեխղճորեն կատարել իր աշխատանքային պարտականությունները, խնամքով

վերաբերվել Համալսարանի սարքավորումներին, գույքին և այլ նյութական միջոցներին,

դ. ապահովել մասնագիտական պատշաճ մակարդակ,

ե. չկիրառել դաստիարակության այնպիսի մեթոդներ, որոնք կհանգեցնեն սովորողի անձի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան բռնության

5. Քոլեջի թափուր մանկավարժական աշխատատեղի համար տնօրենի առաջարկով և Համալսարանի ռեկտորի հրամանով կարող է անցկացվել մրցութային ընտրություն:

6. Քոլեջի դասախոսներն իրենց մեթոդամանկավարժական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման նպատակով՝ սահմանված կարգով պարբերաբար վերապատրաստվում են:

V. ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂԸ

1. Քոլեջի ուսանողը միջին մասնագիտական կրթական ծրագրեր յուրացնելու համար Համալսարանի ռեկտորի հրամանով, մրցութային հիմունքով ընդունված անձն է, որին տրվում են սահմանված նմուշի ստուգման գրքույկ:

2. Համալսարանը 18 տարին լրացած կցագրված ուսանողի հետ կնքում է պայմանագիր, որի պայմաններն առանց փոփոխության գործում են մինչև ուսանողի՝ ուսումնական պլանով նախատեսված ժամկետի ավարտը, 18 տարին չլրացած կցագրված ուսանողի փոխարեն պայմանագիրը կնքվում է նրա ծնողի, որդեգրողի, հոգեբարձուի հետ:

3. Քոլեջի ուսանողի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են բաժնի կանոնադրությամբ, Համալսարանի ներքին կարգապահական կանոններով,իրավական այլ ակտերով:

4. Քոլեջի ուսանողն իրավունք ունի՝

ա. ստանալու կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի ու մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ,

բ. վճարովի հիմունքով ստանալու երկրորդ մասնագիտություն կամ օգտվելու լրացուցիչ (այդ թվում՝ վճարովի) կրթական ծառայություններից,

գ. ստեղծելու սովորողների ինքնակառավարման մարմիններ, խմբակներ, ակումբներ,

դ. անվճար օգտվելու Համալսարանի գրադարանից, տեխնիկական միջոցներից,

ե.մասնակցելու Համալսարանի գիտահետազոտական, կոնստրուկտորական աշխատանքների կատարմանը,

զ. մասնակցելու քոլեջի կարևորագույն հարցերի քննարկմանն ու լուծմանը,

է. խղճի ազատության, սեփական հայացքների ու համոզմունքների ազատ արտահայտման,

ը. սահմանված կարգով ստանալու պետական կամ այլ կրթաթոշակ,

թ. ստանալու ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

5. Առկա ուսուցմամբ սովորողներն իրավունք ունեն ուսումնառությունից ազատ ժամանակ աշխատելու ցանկացած կազմակերպական-իրավական ձևի կազմակերպությունում:

6. Քոլեջի ուսանողը պարտավոր է՝

ա. կատարել քոլեջի և Համալսարանի կանոնադրությունների պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները,

բ. խնամքով վերաբերվել Քոլեջի և Համալսարանի գույքին,

գ. հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը,

դ. սահմանված կարգով վճարել ուսման վարձը,

ե. կատարել միջին մասնագիտական կրթության ծրագրերի պահանջները:

զ.բարձր պահել քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը

է. պահպանել հասարակության բարոյական նորմերը

7. Բարձր առաջադիմություն, փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքներում գործուն և արդյունավետ մասնակցություն ցուցաբերած ուսանողների համար Համալսարանի կողմից կարող են սահմանվել նյութական ու բարոյական խրախուսման տարբեր ձևեր:

8. Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի պահանջները, քոլեջի կանոնադրությամբ նախատեսված պարտականությունները չկատարելու, Համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու համար ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական ներգործության միջոցներ՝ ընդհուպ քոլեջից հեռացումը:

Ուսանողների հեռացման, վերականգնման, տեղափոխման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

VI. ՔՈԼԵՋԻ ԿՈՒՐՍՂԵԿԸ

1. Քոլեջի կուրսղեկը պարտավոր է.

ա. դաստիարակչական աշխատանք է կատարում իր կուրսի ուսանողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ,

բ. անհրաժեշտության դեպքում կազմակերպում է ուսումնական օգնություն,

գ. Բաժնի ղեկավարությունը ներկայացնում է ուսանողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն,

դ. կազմակերպում է ուսանողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, այլ միջոցառումներ:

VII. ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

1. Հաստատության ուսանողական ինքնավարության բարձրագույն մարմինը քոլեջի 1-4-րդ

կուրսերի ուսանողներից ձևավորված խորհուրդն է,
ա. նոր ուսումնական տարվա առաջին ընդհանուր ուսանողական ժողովը հրավիրվում է քոլեջի կողմից՝ սեպտեմբեր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում:
բ. ուսանողական ընդհանուր ժողովը հրավիրվում է՝
1) տարեկան առնվազն երկու անգամ ուսանողական խորհրդի նախագահի կողմից,
2) արտահերթ ժողով կարող է հրավիրվել՝ ուսանողական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով,
3) քոլեջի տնօրենի նախաձեռնությամբ,
գ. ուսանողական ընդհանուր ժողովը քոլեջի սեպտեմբերյան ժողովում ձևավորում է խորհրդակցական մարմին՝ուսանողական խորհուրդ,
դ. ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է մանկավարժական խորհրդի այն նիստերին (կամ հարցերի քննարկմանը), որտեղ քննարկվում են ուսանողներին անմիջականորեն վերաբերող հարցեր:

VIII. ՔՈԼԵՋԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

1. Քոլեջի գործունեությունն ապահովելու նպատակով Համալսարանը հատկացնում է տարածք, սարքավորումներ և այլ անհրաժեշտ գույք:

2. Քոլեջը Համալսարանի առջև պատասխանատու է իրեն հատկացված գույքի պահպանման և արդյունավետ օգտագործման համար:

3. Քոլեջը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, պատասխանատու է բնապահպանական նորմերի պահպանման համար:

4. Քոլեջի ֆինանսավորման աղբյուր են՝

Քոլեջը ըստ հիմնադրի սահմանած չափի և հատկացումների ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ միջոցներից :

5. Քոլեջի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր են՝

ա. սեփական միջոցները, որոնք գոյանում են օրենքով չարգելված գործունեության տեսակներից,

բ. ՀՀ համայնքների բյուջեներից,

գ. ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր նվիրատվություններից:

6. Քոլեջն իր միջոցների հաշվին աշխատողների աշխատավարձի նկատմամբ կարող է կիրառել հավելումներ:

ՔՈԼԵՋԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

1. Քոլեջը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ կամ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով :